

Սանահինի 1050-ամյա համալսարանը

Մարգյան Ս.Թ.,

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/

E-mail: sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ Սանահին, Ամենափրկիչ եկեղեցի, բարձրագույն հոգևոր դպրոց-համալսարան, 1050-ամյակ

1050-year-old University of Sanahin

Sargsyan S.T.

Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan),

E-mail: sargsyansuren@yandex.ru

Abstract: Armenian King Ashot III the Merciful and his wife Queen Hosrovanush in honor of her sons Smbat and Kyurike in 966 built the Church of the Saviour in Sanahin. It is believed that it was in the same year, the monastery was founded a spiritual high school (university), which began to flourish in times of Smbat II, when he his special decree recognized Sanahin monastery spiritual center of Tashir-Dzoraget, and she Spasskaya church became the mother church - Catholicosate.

In Sanahin University taught "seven liberal arts", prepared intelligent spiritual and national figures. The University is also a major center for writing and had a rich library. An important part of the library was the works of the greatest thinkers of his time as Grigor Magistros Pahlavuni, Hovhannes Imastaser (first introduced expert method as the basis of educational and scientific programs), the manuscript of versatile development scholars such as Gregory Arasavordi, Anania Sanaentsi, Hovhannes Sarkavag, Grigor Tatevordi and others.

Today, a little older, a little dark, and sometimes "bruised" 1050-year-old University of Sanahin is proud and imposing, like a stone document as a living testimony to all mankind that even many centuries ago we were inherent create universities and writing centers. Unfortunately, due to lack of their own state, we do not have the opportunity to publicly notify this reality. Today Sanahin proud and unwavering, with his height of states - Armenians always do good, to spread the teaching and writing, so they have always been, is and will be forever.

Keywords: Sanahin, Church of the Saviour, spiritual high school-university, 1050-year-old

1050-летний университет Санаина

Саргсян С.Т.

Институт истории НАН РА (Армения, Ереван),

E-mail: sargsyansuren@yandex.ru

Резюме: Армянский царь Ашот III Милостивый и его жена королева Хосровануш в честь своих сыновей Смба́та и Кюрика в 966 г. построили Спасскую церковь в Санаине. Полагается, что именно в том же году при монастыре была основана духовная высшая школа (университет), которая начала процветать во времена Смба́та II, когда тот своим особым указом признал Санаинский монастырь духовным центром Ташир-Дзорагета, а сама Спасская церковь стала материнской церковью – католикосатом.

В санаинском университете преподавались “семь свободных искусств”, готовились умные духовные и национальные деятели. Университет являлся также крупным центром письменности и имел богатую библиотеку. Важной частью этой библиотеки составляли труды таких величайших мыслителей своего времени, как Григор Магистрос Пахлавуни, Ованес Имастасер (впервые внедривший экспертный метод в основу учебно-научных программ), рукописи таких разносторонне развитых ученых, как Григор Арасаворди, Анания Санаенци, Ованес Саркаваг, Григор Татеворди и других.

Сегодня, немножко постаревший, малость мрачный, а местами “израненный” 1050-летний университет Санаина стоит гордо и внушительно, как каменный документ, как живое свидетельство всему человечеству о том, что даже много веков назад нам было присуще создавать университеты и центры письменности. К сожалению, из-за отсутствия собственной государственности, мы не имели возможности во всеулышание известить об этой реальности. Сегодня Санаин горда и непоколебимо, со своей высоты заявляет – армяне всегда творили добро, распространяли учење и письмо, поэтому они всегда были, есть и будут навечно.

Ключевые слова: Санаин, Спасская церковь, духовная высшая школа-университет, 1050-летие

Այս տարի՝ 2016 թ. լրանում է 966 թ. հիմնադրված Սանահինի վանական համալիրի և համալսարանի 1050-ամյակը: Ասել է, թե՛ Սանահինի համալսարանը աշխարհի հնագույն

կրթօջախներից է, պատմական մեծ արժեք ու հարստություն, որը կարող է պատիվ բերել ու անսահման հպարտության զգացումներ առաջացնել: Միևնույն ժամանակ հնարավորութ-

յուն՝ աշխարհին ապացուցելու, որ չնայած հարևան թուրքերը ցեղասպանելով ու հայրենագրկելով տարածաշրջանի բնիկներ հայերին, ոչ միայն տիրացել ու վայելում են մեր ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները, այլև հավակնություն են հայտնում ի սկզբանե հայկական եղած տարածաշրջանի նկատմամբ: Այնպես որ, այսօր մեզ նետված մարտահրավերներին արժանիորեն պատասխանելու համար, առավել քան կարևոր է ու անհրաժեշտ, վեր հանել մեր պատմական անցալը, գնահատել ու նորովի մատուցել աշխարհին:

Սանահինի վանքի¹, համալսարանի ու այնտեղ ստեղծագործած նշանավոր այրերի մասին, մատենագիտական աղբյուրներն ու պատմագիտական ուսումնասիրություններն այնքան էլ առատ չեն: Անփոխարինելի է Սանահինի «Քոթուկը»², որի 33-35 էջերում նշվում է, որ Սանահինի և Հաղպատի վանքերը իր կամակից ամուսնու՝ Աշոտ Ողորմածի³ աջակցությամբ իր Սմբատ և Գարգեն որդիների արևշատության համար, Տրդատ ճարտարապետի ձեռքով, հիմնադրել է Խոսրովանուշ թագուհին 966 թ.: Այդ նույն վավերագիրը պարզաբանում է, որ Գուրգենին, տեղական բարբառով Կյուրիկե են անվանել, որից թագավորությունն էլ նրա անունով կոչվել է Կյուրկյան: Նշվում է նաև, որ Բագրատունիները Գուրգաց հին բերդիշխանության նման այն հիմնեցին Հայաստանի հյուսիսային սահմանները պահպանելու համար:

Սանահինի վանքում 972 թ. Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» աշխատության հայերեն թարգմանության արտագրված մի ձեռագրում /այն լավագույնս ուսումնասիրո՞ծ Կ. Ղաֆադարյանի⁴ վկայությամբ/, ևս գրիչը հայտնում է, որ 972 թիվը Սանահինի վանքի հիմնադրման վեցերորդ տարին է եղել և, որ հիշյալ ձեռագիրն ընդօրինակել են Խաչիկ (Աղարունի) կաթողիկոսի գահակալության առաջին տարում՝ 966 թ.վականին: Ժամանա-

կագիր Սամուել Անեցին (12-րդ դար) ևս Սանահինի վանքի հիմնադրումը նշանակել է 966 թ.: Ենթադրելի է, որ նույն թվականին էլ հիմնադրվել է նաև համալսարանը:

Մյուսը՝ 979 թ. գրված՝ Սմբատ Տիեզերակալի արքայական հրովարտակն է, որով նա Սանահինում հաստատում է եպիսկոպոսական աթոռ և շնորհում է նրան ընդարձակ վիճակ՝ Գուրգաց աշխարհը, Նիզը, Տաշիրքը մինչև Վրաստանի և Շիրակի սահմանները:

Սանահինի համալսարանի մասին տեղեկություններ ենք քաղել նաև Հակոբ Սանահնեցու «Ժամանակագրության» հիման վրա շարադրված Ուռուհայեցու երեք մասից բաղկացած «Ժամանակագրություն»-ից⁵: Մեզ համար հատկապես կարևոր է 952-1051 թթ. Իրադարձություններն ընդգրկող առաջին մասը: Օգտակար տեղեկություններ է պարունակում նաև 1052-1101 թթ. իրադարձություններին վերաբերող երկրորդ մասը, որը գրելիս Մ. Ուռուհայեցին որպես աղբյուր օգտագործել է ականատեսների պատմածները և իր տեսածները: Սանահինում եկեղեցի կառուցելու մասին տեղեկություններ են հաղորդում նաև Կյուրիկյան թագավորության պատմագիր Վարդան վարդապետը⁶, ում պատմությունը մեզ չի հասել և Կիրակոս Գանձակեցին⁷, որը չուզենալով կրկնել ուսուցչին, քիչ բան է գրել Սանահինի մասին: Նրանք նշում են, որ Ռոմանոս Ա կայսեր ժամանակ (920-944) Բյուզանդական կայսրության սահմաններում ապրող հայ հոգևորականներին առաջարկել են ընդունել քաղքեղոնական դավանանք և միանալ բյուզանդական եկեղեցուն: Հայ հոգևորականները չեն համաձայնել, հալածվել են ու ապաստանել Բագրատունյաց հայ թագավորների սահմաններում և հիմնել են վանքեր, որոնց թվում նաև՝ Սանահինի Աստվածածնի եկեղեցին⁸: Սանահինի վանքի հիմնադրման, գրված ձեռագրերի ու կրթարանի մասին հի-

¹ Ժողովրդական ստուգաբանությամբ Սանահինը՝ սահին է, քան նա՝ Հաղպատը:

² Սանահնի Քոթուկ, ձեռագիր Մատենադարանի թիվ 3032, նույնը նաև թիվ 8150:

³ «Քոթուկ», էջ 47:

⁴ Ղաֆադարյան Կ., Սանահին և Հաղպատ վանքերը (հիմնադրման 1000-ամյակի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, 1968, էջ 6-20:

⁵ Ենթադրվում է, որ «Ժամանակագրություն»-ը գրել սկսել է 1113-1128 թթ.: Այն բաղկացած է 3 մասից: Երրորդ մասը (1102-1137-ի իրադարձությունները) ավելի արժեքավոր են և հավաստի, որովհետև նկարագրել է իր ժամանակը:

⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ, Վենետիկ, 1862, էջ 88:

⁷ Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ Թիֆլես, 1909, էջ 79:

⁸ Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ Թիֆլես, 1909, էջ 79:

շատակություններ են թողել նաև Ասողիկը, Մամուել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբեյանը⁹ և այլ պատմիչներ:

Ժամանակակից որոշ ուսումնասիրողներ ևս իրենց մասնագիտական տեսանկյունից անդրադարձել են Սանահինի վանական համալիրի, այնտեղ գրված ձեռագրերի ու գործած համալսարանի պատմությանը:

Մատենագիտական աղբյուրներն ու վանքում գտնված արձանագրությունները լավագույնս ուսումնասիրել է վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը: Նրա աշխատանքում ներկայացված են «շուրջ 180 մեծ ու փոքր վիմագիր արձանագրություններ»¹⁰, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում վանքի ու ժամանակի պատմական իրադարձությունների մասին: Խիստ արժեքավոր է նաև ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2012 թ. հրատարակած «Դիվան հայ վիմագրության» IX պրակը, որը պարունակում է Լոռու տարածաշրջանի 1190 արձանագրություն, որոնց մի զգալի մասն առաջին անգամ է հրատարակվել¹¹:

Սանահինի վանքի և համալսարանի պատմությանն անդրադարձել է նաև բժախընդիր հետազոտող Գ. Շախկյանը, ում աշխատությունը¹² արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սանահինի համալսարանի մասին: Ամենացորդ նվիրումով ու պատասխանատվության բարձր զգացումով հեղինակը շարադրանքին զուգացում է լուսանկարներ և զծագրեր, ինչն ավելի առարկայական է դարձնում ասելիքը: Սանահինի վանական համալիրի մասին ուսումնասիրություններ են հեղինակել նաև Նիկողայոս Մառը¹³, Հովսեփ Օրբելին¹⁴, Ալեքսանդր Երիցյանը¹⁵, Գարեգին կաթո-

ղիկոս Հովսեփյանը¹⁶, Թորոս Թորոմանյանը¹⁷, Երվանդ Լալայանը¹⁸, Մարի Բրոսեն¹⁹ Հովհաննես Ղալփախյանը²⁰, Ասատուր Մնացականյանը²¹, Արտաշես Մաթևոսյանը²², Իսահակ Հարությունյանը²³ և ուրիշներ: Դրանցում անդրադարձներ կան նաև համալսարանի պատմությանը:

IX դարում օգտագործելով արաբա-բյուզանդական հակամարտությունները Բագրատունիները ոչ միայն կարողացան երկիրը տևական ժամանակ զերծ պահել օտար ներխուժումներից, այլև 885 թ. վերականգնել Հայաստանի անկախությունը: Այդ ավելի քան մեկուկես հարյուրամյակ տևած ստեղծագործական կյանքի խաղաղ պատմափուլում երկիրը տնտեսական և մշակութային բոլոր ասպարեզներում բուռն զարգացում ապրեց: Դրանից անմասն չմնաց նաև «Երկրային դրախտ»²⁴ Լոռին: Մեր պատմության այդ քարեղեն էջերը միաբերան պնդում են, որ X-XI

⁹ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 12:

¹⁰ Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 3: Տե՛ս նաև Ղաֆադարյան Կ., Սանահին և Հաղպատ վանքերը (հիմնադրման 1000-ամյակի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, թիվ 3, 1968, 6-20 էջեր:

¹¹ Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Ե., 2012:

¹² Շախկյան Գ., Լոռի պատմության քարակերտ էջերը, Ե., 1986:

¹³ Марр, К Армянской надписи Санаинского моста. «Христианский Восток», т. 4, вып. 2-ой, ст 91-95:

¹⁴ Орбели И., Надпись Санаинского моста, «Христианский Восток», т. 4, вып. 4-ий, 1915, ст. 104-123:

¹⁵ Ерицов Ал., Ахпатский Монастырь «Кавказская Старица», ежемесячный журнал, Тифлис, 1872, стр. 49-52, 83-88.

¹⁶ Հովսեփյան Գարեգին (Կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո), Խաղբակյանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ: Մասն Ա, Վաղարշապատ, 1928, մաս Բ, Երուսաղեմ, 1942, մասն Գ, Նյու-Յորք, 1942/43:

¹⁷ Թորոմանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Կազմեց Կ. Ղաֆադարյան, հտ. Ա, 1942, հտ. Բ, 1948: Հովսեփյան Գարեգին (Կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո), Խաղբակյանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մեջ: Մասն Ա, Վաղարշապատ, 1928, մաս Բ, Երուսաղեմ, 1942, մասն Գ, Նյու-Յորք, 1942/43:

¹⁸ Լալայան Ե., Բորչալուի գավառ, «Ազգագրական հանդես», գիրք 7-8, Թիֆլիս 1901:

¹⁹ Brosset M., Notice historique sur les couvents armeniens de Hahgat et de Sanahin, st.-Petersburg, 1862.

²⁰ Ղալփախյան Հ, Санаин. Москва, 1973, Sanahin. Dokumenti di architettura Armenia. Milano, 1970 (հայերեն և իտալերեն լեզուներով):

²¹ Մնացականյան Ա., Սանահինի և Հաղպատի մենաստանների մշակութային կյանքի պատմությունից (Այդ հաստատությունների հիմնադրման 1000-ամյակի առթիվ), «Էջմիածին» ամսագիր, թիվ 3, 1968, 21-30 էջեր:

²² Մաթևոսյան Ա., Սանահինի և Հաղպատի գրչության կենտրոնները, «Էջմիածին» ամսագիր, թիվ 3, 1968, 31-40 էջեր:

²³ Հարությունյան Բ., Սանահին: «Ազգագրական հանդես», Գ տարի, 1898, թիվ 1, Թիֆլիս, 1903, էջ 273-315:

²⁴ «Թախծալի է բաժանվել այդ երկրային դրախտից, այդ բարձրագագաթ լեռներից, այդ ծաղկազարդ ձորերից, կուսական անտառներից, սրընթաց գետերից, կանաչազարդ, գեղեցիկ հովիտներից, ահռելի ժայռերից...» (Շիրվանզուղե, Լոռվա ձորերում, Երկերի ժողովածու, հ. IX, Ե., 1961, էջ 63):

դդ. Սանահինի վանական համալիրում զարգացած է եղել կրթական ու գրչության գործը:

Համալիրի առաջին՝ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է Աբաս Ա-ի (928-953) ժամանակ՝ X դ. 30-40-ական թթ.²⁵, իսկ 966 թ. Խոսրովանուշ թագուհին կառուցել է տվել Ս. Ամենափրկիչ եկեղեցին: 966 թ. հիմնվել է նաև միաբանություն և **բարձրագույն կարգի հոգեվոր դպրոց**: Հիմնադիր վանահայրն էր Պոլիկարպոսը, որին հաջորդել է Հովհաննեսը: X-XIII դդ. գործած Սանահինի վանական համալիրը վերոնշյալներից բացի իր մեջ ներառում էր նաև ավելի ուշ կառուցված Ս. Գրիգոր և Ս. Հարություն մատուռները, ճեմարանը, գրատունը, զանգակատունը և այլ շինություններ:

979 թ. Սմբատ Բ.-ի հրովարտակով Սանահինի վանքը ճանաչվեց Կյուրիկյան թագավորության հոգևոր կենտրոն և այնտեղ հաստատվեց եպիսկոպոսական աթոռ: Ամենափրկիչը դարձավ մայր եկեղեցի՝ կաթողիկե²⁶: Թեմակալ ձեռնադրվեց Եսային, երևելի վանահայրերից էր «մեծ հոետոր» հռչակված Դիոսկորոս Սանահնեցին: Այսինքն՝ X-XI դարերում Բագրատունիները մեծ կարևորություն էին տալիս Հայաստանի հյուսիսային մատույցներին: Դա էր ապացուցում նաև այն, որ արքաեղբայրը կամ արքայազնն էին նշանակվում հյուսիսային սահմանապահ զորքերի հրամանատար:

X-XI դդ. տնտեսության վերելքն իր հերթին մեծապես խթանեց մշակույթի, գիտության և կրթության զարգացմանը²⁷: Շատերը մեկնում էին այլ երկրներ, բարձր կրթություն ստանում, կատարելագործվում, հաղորդակից դառնում բյուզանդական և համաշխարհային մշակութային ձեռքբերումներին: Արտերկրից մասնագիտանալու և համագործակցելու նպատակով ևս այցելում էին մայր հայրենիք: Նրանք

նաև դասավանդում էին համալսարաններում, ուսուցանում և խոր ու բազմակողմանի գիտելիքներ էին տալիս իրենց սաներին: Այդպիսի կենտրոններից էր Վանքի հոգևոր դպրոցը, որն ավանդաբար կոչվում է Մագիստրոսի ճեմարանը (Գրիգոր Մագիստրոս Պաղատունու անունով): Ընդհանուր առմամբ, միջնադարյան Հայաստանում կազմակերպվում էին երկու կարգի ուսումնական կենտրոններ՝ պարզունակ տարրական և բարձր տիպի դպրոցներ, որոնք հաճախ անվանվել են նաև համալսարաններ:

Տարրական դպրոցները²⁸ մի քանի տեսակի էին՝ վանական, եկեղեցական, հասարակական, պետական, տնային կամ մասնավոր: Ժամանակի պահանջների արդյունքում դրպրոցների մեծ մասը կենտրոնացած էին վանքերում, որոնք միջնադարում հսկայական դեր են խաղացել հայոց կյանքի քաղաքական և կրթության ասպարեզներում: Դրանք եղել են նաև գրչության օջախներ, մատենադարաններ ու գրատներ: Միջնադարյան Հայաստանում ավելի տարածված էին հասարակական դրպրոցները, որոնք պահպանվում էին եկեղեցու և պետության միջոցներով:

Մեսրոպատառ առաջին մատյանների էջերում վաղնջական ժամանակներից ի վեր ծվարած «Համալսարան»²⁹ հասկացությունը պիտի իրականություն դառնար, հենց որ ճակատագիրը խաղաղ կյանքի առավոտ բացեր Հայոց աշխարհում: Եվրոպայի³⁰ և այլ վայրերի

²⁵ Շախկյան Գ., նշվ. աշխ., էջ 88:

²⁶ Այդ անունով եկեղեցին հիշվում է վիմական արձանագրություններում, վանքի շինարարությանը, պատմության և տնտեսական կյանքին վերաբերող փաստաթղթերի «Քոթուկ» ժողովածուում:

²⁷ Այս հարցերի մասին բարձր մակարդակի գիտական հոդված է գրել հայ գիտության ու կրթության պատմության հարցերի խորագիտակ, ճանաչված գիտնական, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը: Տե՛ս Բարխուդարյան Վ., Կրթությունը միջնադարյան Հայաստանում. X- XIV (համառոտ ուրվագիծ), «Պատմա-բանասիրական հանդես», 2013, թիվ 3, էջ 3-21:

²⁸ Միջնադարյան Հայաստանում իրականացվող կրթության ձևերի ու դպրոցների տեսակների մասին մանրամասն տե՛ս, Բարխուդարյան Վ., Կրթությունը միջնադարյան Հայաստանում X-XIV դարեր (համառոտ ուրվագիծ), «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 2013, թիվ 3, էջ 3-21:

²⁹ Համալսարան (գերմաներեն Universitat բառից, որն էլ իր հերթին ծագում է լատիներեն universitas-ընդհանրություն բառից), բարձրագույն ուսումնական հաստատություն, որը շնորհում է բոլոր մակարդակների ուսումնական կոչումներ (բակալավր, մագիստրոս, դոկտոր): Եվրոպայում համալսարաններ են գործել միջնադարից, ավելի կոնկրետ՝ XI դարից՝ Բուալիայի Բոլոնիայի իրավունքի և Մալեոնոյի բժշկական, 1209 թ. Քեմբրիջի և Օքսֆորդի, 1215 Փարիզի, 1290 Պորտուգալիայի, 1348 Չեխիայի, 1364 թ. Կրակովի, 1365 թ. Վիեննայի, Հայդելբերգի՝ Գերմանիա, 1477 թ. Շվեդիայի, 1479 թ. Դանիայի:

³⁰ Այստեղ բարձրագույն կրթությունը կենտրոնացած էր՝ աստվածաբանությունը՝ Փարիզի, իրավագիտությունը՝ Բոլոնիայի, բժշկությունը՝ Սալերնոյի համալսարան-

համալսարաններում կրթված հայ երիտասարդները վերադառնալով հայրենիք՝ Հռոմի ու Աթենքի, Ալեքսանդրիայի ու Բյուզանդիայի իրենց տեսածների օրինակով ստեղծում էին հայրենի համալսարանները: Դրանց թվում առաջիններից էր X-XIII դդ. գործած Սանահինինը, որտեղ դասավանդվում էին իմաստասիրություն, մաթեմատիկա, բնագիտություն, տրամաբանություն, պոետիկա, պատմություն, քերականություն, մարդակազմություն, աստվածաբանություն, երաժշտություն, նրկարչություն, գրչություն և այլ շատ առարկաներ: Կրթության ոլորտում նշմարելի չափերով ուժեղանում էր աշխարհականացման միտումը: «Թերևս անհավատալի թվա,-գրում է XVIII դար ֆրանսիացի արևելագետ Գուլիելմուս Վիլֆրուան, եթե ասեմ, որ IX-XIII դդ. Հայաստանն Ասիայի համար ամենանշանավոր ակադեմիան է եղել և մեծապես կարող էր այս աշխարհամասի ուսուցիչը լինել: Նա այդ ամբողջ ժամանակաշրջանի բոլոր գիտությունները հարստացրել է բազմահմուտ մարդկանցով և տարբեր լեզուների գերազանց տիրապետող թարգմանիչներով»³¹:

Եվրոպականին **համահունչ** իրականացվող ուսումնական **գործընթացի և** Հայաստանին միջև կար մի **էական, վճռորոշ տարբերություն**: Ի տարբերություն Հայաստանի, կրթական կենտրոններն այնտեղ առաջանում էին երկրի խաղաղ, նպաստավոր պայմաններում: Պետությունն աջակցում, դյուրին էր դարձնում դրանց գործունեությունը: Ամենավաղը՝ IX դարում, Բյուզանդիայի մայրաքաղաք Կ. Պոլսում է համալսարան բացվել, որի հիմնական նպատակը պետական ապարատի համար պաշտոնյաներ պատրաստելն էր³²: Այս համալսարանն ուներ իրավունքի և փիլիսոփայության ֆակուլտետներ, որոնց տնօրենները պաշտոնավարում էին ցմահ³³, դասախոսներն աշխատավարձ էին ստանում, իսկ ուսանողները՝ նյութական օժանդակություն³⁴:

Ընդհանրապես վանքերի մի մասը միջնադարում զբաղվում էր կրոնական քարոզով և

բարեգործությամբ: Մյուս մասի համար կրոնականի կողքին հիմնականն ու էականը գիտակրթական գործունեությունն էր: Այդպիսի վանքերում կային վարդապետարաններ, որոնք, ուսուցման որոշակի մշակված ծրագրերով բարձրագույն դպրոցներ էին: Վարդապետարաններն ամեննին չէին առնչվում եկեղեցական նվիրապետության աստիճանակարգի վարդապետ կոչման հետ: Դրանք գիտակրթական կենտրոններ էին, որոնք ավարտելով՝ սաները ստանում էին գրագիտության, գիտնականության բարձր տիտղոս համարվող վարդապետական աստիճան (անգամ եպիսկոպոսներն էին այդպիսի աստիճան ստանում): Այդպիսիներից էր նաև հայ **դպրության միջնադարյան «մայրաքաղաքներից» Սանահինի համալսարանը**: Որը ոպես **բարձրագույն տիպի դպրոց**, ունեցել է իր հարուստ գրադարանը՝ մատենադարանը: Վերջինն ունեցել է հատուկ շենք, սակայն ձեռագրերն հիմնականում պահվել են անմատչելի քարայրում: Մատենադարանը հարստացել է Սանահինի համալսարանի սաների ընդօրինակությունների շնորհիվ: Սանահինի մատենադարանի հին ու ընտիր ձեռագրերը հիմք են հանդիսացել ուսուցման և ընդօրինակությունների համար: Մատենադարանի կարևոր մասն են կազմել նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, Գրիգոր Արաստորդու և ուրիշների դասավանդման նպատակով գրած ձեռագրերը:

Համալսարանում դասավանդվում էին «յոթ ազատ արվեստները»: Գիտությունը և ուսուցումը հաճախ համատեղվում էին: Համալսարանի և նրանց ուսուցչապետերի գործունեության մասին, ցավոք, շատ սակավ տեղեկություններ են պահպանվել: Սակայն մեզ հասածների հեղինակները միաբերան այն բարձր աստիճանի հասած «մեծահռչակ» հաստատություն են անվանել: Համալսարանում գործել են խոշորագույն գործիչներ Դիոսկորոս կաթողիկոսը Անանիա Սանահնեցին, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Մարկավազը, Գրիգոր Տուտեորդին և շատ ուրիշներ:

Հայ իրականության մեջ այն ժամանակվա **ամենամեծ մտածողի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու** անունով Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիների միջև կառուցված սրահը կոչվել է «մագիստրոսի ճեմարան»: Նրա թոթերից և բանաստեղծություններից մեր առաջ հառնում է դեռևս իր ամբողջական

ներում: St'u История всемирной литературы, т. 2. М., 1984, с. 501.

³¹ Noratert.am էլեկտրոնային կայք:

³² История Византии, т. 2. М., 1967, с. 355.

³³ Բարխուդարյան Վ., նշվ. աշխ., էջ 12:

³⁴ Культура Византии (вторая половина VII–XII вв.). М., 1989, с. 394–395.

գնահատությանն սպասող փիլիսոփան, լեզվաբանը, թարգմանիչը բանաստեղծը, աստվածաբանը, մանկավարժը, տեսաբանը, ինչպես նաև գորականն ու գորավարը: Ի դեպ, այդ նա էր, որ ճիշտ գնահատելով պատմական դեպքերի զարգացումը, նկատում էր, թե հայ գրերի գյուտից հետո, սեփական պետության բացակայության պատճառով, գրի և դպրության սքանչելի գյուտը դարձավ լոկ հոգևոր բնագավառի մենաշնորհը: Այժմ, ասում էր նա, երբ սեփական թագավորությունը վերաստեղծված է, պետք է զարկ տալ աշխարհիկ մանկակրթությանը, պետության և ժողովրդի շահերին նպաստող գիտության զարգացմանը: Նա մոռացության փոշուց դուրս բերեց Ա. Շիրակացու աշխատությունները և դրանց նկատմամբ պահանջեց պատշաճ վերաբերմունք: Նրա գրչից ծնվեց հայրենասիրական և աշխարհիկ բովանդակությամբ գրված առաջին բանաստեղծությունը՝ որով նա զենքի էր կոչում ընթերցողին և երիտասարդությանը կոչ էր անում ելնել երկիր մտած թշնամու դեմ:

Հայագետ Գ. Հովսեփյանը համալսարանի րաբունապետի գործունեությունը երեք մասի է բաժանել՝ **դպրոցական, եկեղեցական և մատենագրական-գիտական**³⁵: Ենթադրվում է, որ նա տիրապետում էր հունարենին: Լեզվաբան Լ. Խաչերյանը գտնում է, որ հայ քերականագիտությունը արգասավորվել է հունական միջավայրից, սակայն այն ձևավորվել ու զարգացել է՝ սնվելով հայկական դպրության ակունքներից³⁶: Ենթադրվում է, որ հայ միջնադարյան մյուս ուսուցչապետերի նման քերականության ուսումնասիրության բնագավառում լուրջ ներդրում կատարող Մագիստրոսն ուներ դպրոց-ճեմարան, որտեղ դասավանդում էր քառյակ արվեստներ, անդամագնություն և այլն:

Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է, որ Գրիգոր Մագիստրոսը մեծ գիտելիքների տեր անձնավորություն էր, Կոստանդնուպոլսում բանավիճել է Բյուզանդիայի գիտնականների հետ և բոլորին զարմացրել իր իմացություններով: Նա հիմնավորել է «յոթ ազատ արվեստների» ուսուցման անհրաժեշտությունը, «եռ-

յակ» և «քառյակ» բաժանումներով³⁷: Նա համակարգել է վարդապետարանի ուսումնական ծրագրերը, կազմել հանձնարարելի գրքերի ցանկը, որը հայտնի է «Սարկավագյան մատենացանկ» անունով: Դրանում հին ու նոր կտակարաններից և առհասարակ աստվածաբանությունից բացի ընդգրկված էին փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականության վերաբերյալ աշխատություններ: Քերականությունը նա համարում էր գիտության բնալիք: Նկատի առնելով նրա գիտական այդ մեծ պաշարը՝ պետք է կարծել, թե Մանահինի կրթակենտրոնն ինչպիսի բարձրության վրա է եղել, որ գրավել է նրան և նպաստել գործունեություն իրականացնել այնտեղ:

Մանահինում է գործել նաև **Հովհաննես Իմաստասերը**, որը վարդապետարանի սաների համար կազմել է ուսումնական ծրագրեր, ինչպես նաև «Յադագս անկիւնաւոր թուոց» խորագրով մաթեմատիկայի ձեռագիր դասագիրք գրել: Նա նաև անձամբ դասավանդել է տոմարագիտություն, որը վարդապետարանների ուսումնական ծրագրերի կարևոր մասն էր կազմում: Իմաստասերն առաջիններից մեկը գիտաուսումնական ծրագրերի հիմքում դրեց **փորձաքննական մեթոդը**: Նրա սաներից շատերն ավարտելով համալսարանը մտավոր-քարոզչական աշխատանք են կատարել Հայաստանի ու հարակից տարածաշրջանների տարբեր գավառներում:

Հավանաբար Մանահինի կրթարանում գործել են փիլիսոփայության, հռետորական, երաժշտական, բժշկական բաժիններ, դասավանդվել «յոթ ազատ արվեստներ», տոմար և այլ գիտություններ: Մանահինի դպրոցի զարգացմանը նպաստել են նաև րաբունապետեր Դիսկորոսը, Սիմեոնը, Գրիգոր Տուտեորդին, Գրիգոր Արաստորդին, Վարդան Արնելցին, գրիչներ Մաթևոսը, Կարապետը, Խաչատուր և Ավետիք վարդապետները, Ղազարը, Հովհաննեսը, թուղթ կոկող Ստեփանոսը (նորոգել է 2 հզ. տետր թուղթ, որը բավական էր միջին մեծության 100 ձեռագրի համար) և ժամանակի նշանավոր այլ այրեր: Հատկապես վանահայր Դիոսկորոս Մանահինեցու օրոք գրվել,

³⁵ «Արքիպեղիա»՝ ազատ համացանցային հանրագիտարան (<http://hy.wikipedia.org>):
³⁶ Խաչերյան Լ., Գլաձորի համալսարանը..., էջ 112:

³⁷ Լ. Խաչերյան, Հայագիր դպրության ուսումնագիտական կենտրոնները, դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ձեմարանները, ակադեմիաները և համալսարանները Միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում (V– XVI դդ.), Լիզպոն, 1998, էջ 386–422:

ծաղկավել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Դպրանոցում ուսանել, իսկ այնուհետև դասավանդել ու ստեղծագործել են գիտնական վանականներ Անանիա Մանահնեցին, Հակոբոս Քարափնեցին և ուրիշ շատ նշանավոր գործիչներ: XII-XIII դարերում Մանահինի վանքում իրենց ծավալած արգասաբեր գիտակրթական և ստեղծագործական գործունեությամբ հայտնի էին նաև Հովհաննես Խաչենցին (Չաքարե և Իվանե Չաքարյան իշխանների ուսուցիչը), Գրիգոր Բաբունապետը, որը վանքին նվիրել է 13 ձեռագիր և շատ ուրիշներ:

XII դարում Մանահինում ուսուցչապետ էր Գրիգոր Տուտեորցին, որը ճանաչված հեղինակություն էր նաև Կիլիկիայի կաթողիկոսարանում և արքունիքում: Ի դեպ, Մանահինի վանքի տարածքում պահպանված 50 արժեքավոր խաչքարերից մեկը 1184 թ. Մխիթար Կազմիչի պատրաստված Տուտեորդու գերեզմանաքար-խաչքարն է, որը խոսուն վկայություն է մեր անցյալ պատմության

XIII դարում ուսուցչապետերի շրջանում նշանավոր դեմք էր հայ մատենագետ, 1214 թ. մինչև մահը Մանահինի վանքի առաջնորդ **Աբասի որդի Գրիգորը**: Հայտնի է «Գիրք պատճառաց»³⁸ աշխատությամբ, որն ունի երեք բաժին՝ ծավալուն հոդվածներով:

Մանահինի կրթական կենտրոնը, որ հովանավորում էին Աշոտ III-ը և կինը՝ Խոսրովանուշը, վերելքի շրջանում Հաղպատի հետ միասին ունեին 500-ի չափ հոգևորականներ և սաների³⁹: Մանահինի աննախադեպ բարգավաճմանը նպաստեց նաև այն, որ այդ եպիսկոպոսությունը դարձավ Հռոմի պապից թելադրվող կաթողիկոսության տարածման դեմ պայքարի հիմնական կենտրոններից: Ինչի համար էլ հայկական իշխանություններն ամեն կերպ սատարում էին այդ կենտրոնին:

Մանահինի համալսարանում ուսանում էին գերազանցապես քահանայական աստիճան ունեցողները: Քահանայական ուսուցումը տևում էր 3 տարի, իսկ վարդապետական աստիճան ստանալու համար սահմանվում էր՝ 7-8 տարի: Շրջանավարտը պարտավոր էր քննություններ հանձնել անցած դասընթացից: Նա նաև ավարտաճառ էր ներկայացնում, որի

պաշտպանությունը կատարվում էր հրապարակավ⁴⁰: Այստեղ սաներ էին հավաքվում Հայաստանի բոլոր կողմերից և սովորում էին տարբեր աստվածաբանական և աշխարհիկ առարկաներ: Նրանց զգալի մասը, ավարտելով համալսարանը և վարդապետական աստիճան ստանալով, երկրի տարբեր մասերում հիմնել են իրենց վարդապետարաններ: Այլ խոսքով, Մանահինի համալսարանը և նրա շառավիղներն ավելի քան մեկուկես դար գիտակրթական, լուսավորական, հասարակական լայն գործունեություն են ծավալել:

Համալսարանի Եռյակ ուսուցման երկրորդ առարկան ճարտասանությունը կամ հռետորությունն էր, որը միաժամանակ անհրաժեշտ գիտելիքներ էր տալիս գրական ստեղծագործության, ոճաբանության, գեղագիտության վերաբերյալ: Այս առարկան սովորեցնում էր ճառ, քարոզ, պաշտոնական ուղերձներ, նամակներ գրելու արվեստը: Հռետորությունն այն զենքն էր, որով իր ազդեցությունն էր տարածում եկեղեցին, ընդդիմանում բոլոր հերձվածքներին ու թշնամական հոսանքներին:

Մանահինի համալսարանում **կրթություն են ստացել նաև աշխարհիկ դասի ներկայացուցիչներ**: Օրինակ՝ հայտնի է, որ դրա սաներից է եղել Գագիկ Ա թագավորը (990-1020 թթ.), որին Ուռհայեցին բնութագրում է որպես հմուտ փիլիսոփա և լավագույն ճարտասան: Մանահինի ավանդույթները հետագայում շարունակեցին Տաթևի, Անիի, Գլաձորի, Ավագ Վանքի և այլ համալսարաններ:

Մանահինը նաև **«գրչության արվեստի» կենտրոն⁴¹ էր, որի համար 1063 թ. կառուցվել է**

³⁸ Յուրաբանչյուր հոդված սկսվում է «պատճառ» բառով, այստեղից էլ՝ գրքի «Պատճառաց» անվանումը:

³⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 314:

⁴⁰ Լ. Խաչիկյանը պարզել է օրինակ, որ Գլաձորի համալսարանի ուսանողները ներկայացրել են ավարտաճառեր: Նա Մ. Մաշտոցի անվ. մատենադարանի 631 ձեռագրում հայտնաբերել է 8-10 էջից բաղկացած տասից ավելի ավարտաճառեր, որոնց մասնագետները համարել էին քարոզներ (տե՛ս Լ. Խաչիկյան. Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները. - Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 23, 1946, էջ 434: Քանի որ հայ միջնադարյան բարձրագույն դպրոցներում՝ համալսարաններում կրթական համակարգին մոտեցումները մեծ աշխույժ նույնանում էին, ուստի հանգիստ կարելի է ենթադրել, որ նույն սկզբունքը ամենայն հավանականությամբ գործել է Մանահինի համալսարանում: Պարզապես այդպիսի ավարտաճառեր կամ չեն պահպանվել, կամ դեռևս հայտնագործված չեն:

⁴¹ Մանահինի՝ որպես գրչության կենտրոնի մասին, հարուստ փաստական հենքով և գիտական բարձր մակար-

Մանահինի վանքի Գրատունը՝ հնագույնը հայոց աշխարհում: Գրատան հորինվածքում հաշվի են առնված մատյանների անխաթար պահպանման, լուսավորության, օղավոխության, ջերմաստիճանի կայունության խնդիրները: Այստեղ նվիրատվությունների, ընթրինակությունների և շարադրանքների եղանակով հավաքվեցին մեծ քանակությամբ ձեռագրեր: Մանահինը «արտահանում» և «ներմուծում» էր ձեռագրեր՝ հավասարակշռելով իր և մյուս օջախների պահանջն ու առաջարկը: Օրինակ՝ Գրիգոր Տղա կաթողիկոսը Կիլիկիայից դիմել է Գրիգոր Տուտերոդուն և հին գրքեր ուզել, իսկ Ղրիմում, Երուսաղեմում, Կիլիկիայում և այլուր գրվում էին ձեռագրեր՝ Հաղպատի և Մանահինի համար:

Մանահինի գրչության կենտրոնի պատմությունն սկսվում է 972 թ. Միմեոն գրչի ընթրինակած հիշատակարանով: Ձեռագիրը, որի մեջ մարմին էր առնում մեսրոպյան գիրը, դպրության ու հայ ժողովրդի ազգապահպանության անփոխարինելի զենքը եղավ: Մանահինի դպրոցում գրչությունը ծաղկում է հմուտ աստվածաբաններ Վարդան, Կյուրիկե Մանահինցիների, Հակոբ Քարափնեցու և հատկապես Գրիգոր Տուտերոդդի և Գրիգոր Աբասարդի մատենագիր-բարունապետների օրոք: Հետագայում՝ Մանահինի գրչության դպրոցը նորից ծաղկում է XIV դարավերջում տեղի աշակերտների, Ղազար վարդապետի և իր եղբայր Հովհաննեսի ջանքերով:

Թե որքան ձեռագրեր են ծնվել Մանահինում, ստույգ տվյալներ չունենք: Ոչ լրիվ տեղեկությունների համաձայն այժմ Մանահինից փրկված ձեռագրերի թիվը երեք տասնյակի ավելի է: Մանահինի գրչության կենտրոնը, սկսած X դարից, իր տքնաջան գրիչների ու վարդապետների ջանքերով հայրենի մշակույթի ջահը պայծառ պահեց՝ հարստացնելով հայ ձեռագրական մշակույթը մատենագիտական կարևոր երկերով, գրչության և մանրանկարչության նշանավոր գործերով, որոնք բազմացվում էին ոչ միայն տեղում, այլև Հա-

յաստանի գրչության տարբեր կենտրոններում:

Իր ծաղկման շրջանում Մանահինի համալսարանն իր պատվավոր տեղն ունենալ դրանց շարքերում, հանգիստ կարող էր մրցակցել ժամանակակից նմանատիպ հաստատությունների հետ: Ահա թե ինչ է գրել հայոց պատմությանը քաջատեղյակ Վ. Բյուսովը Բագրատունիների շրջանում գիտության զարգացման մասին. «Այդ դարաշրջանի ստեղծագործությունները վկայում են, որ հայ գիտնականների իմացությունների մակարդակը 10-11-րդ դդ. ոչնչով պակաս չէր նրանց եվրոպացի գրչակիցներից»⁴²: Մակայն, ցավոք, մեր համաշխարհային մակարդակի կիրառական և մշակութային խոշորագույն կառույցների նման, Մանահինն էլ չկարողացավ զերծ մնալ հայկական դառն պատմական ճակատագրից և չկարողացավ խուսափել անկման ու անհայտության շրջապտույտում ընկղմվելուց: Տարածաշրջանում պարբերաբար հայտնվող կիսավայրենի ցեղերի կենդանաբարոբնագրները անդառնալի կորուստներ պատճառեցին Մանահինի համալիրին:

Այսօր էլ, որպես կենդանի վկա, քարակերտ փաստաթուղթ ու մատյան Մանահինը կանգուն է, որ համայն մարդկությանը վկայի՝ մենք ենք այս տարածաշրջանի միակ բնիկներն ու տերերը, մեզ է հասու եղել հազարից ավելի տարիներ առաջ համալսարան ու գրչատուն, մատենադարան ու զարդաձակողներ ունենալ: Միայն ափսոս, որ հնարավորություն չենք ունեցել այդ իրողությունն աշխարհալուր դարձնելու, քանի որ պետականությունն էինք կորցրել:

Մանահինը կանգուն է: Ճիշտ է, մի քիչ ծերացած, փոքր ինչ խունացած, տեղ-տեղ վիրավոր ու թփակալած, բայց խրոխտ ու հպարտ, անվեհեր հերոսի նման նա իր բարձունքից պարզելով հազարամյա թները ազդարարում է ողջ մարդկությանը՝ հայերը իրենց գոյության հազարամյակների ընթացքում մշտապես բարիք են արարել, գիր և ուսում տարածել, իրենց հացն են վաստակել ու երբեք ուրիշի եղածին աչք չեն տնկել: Որ հենց դա է հիմնական պառճառը, որ հայ ժողովուրդը միշտ եղել է, հավերժ կա ու կլինի առհավետ...

դակ հողված է գրել հայագետ, պատմաբան, աղբյուրագետ ու ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922-2004): Տե՛ս Մաթևոսյան Ա., Մանահինի և Հաղպատի գրչության կենտրոնները՝ էջմիածին. Պաշտոնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. էջմիածնի, ԻԴ (Զ). 1968, էջ. 31-40.

⁴² БрюсовВ., Летопись исторических судеб армянского народа, Ереван. 1940, стр. 87.